Սայաթ Նովա

Մեջլումի պես կորավ յարը

էս էրկու խաղը էն ձենով՝ Բլբուլը նստած է վարթին, լավ կանչեր նա վարթի համա. Արութինի ասած,

Մեջլումի պես՝ կորավ յարը,
Լեյլի ջա՛ն, ման իմ գալի
Յանա-յանա:
Էրվեցավ խունի ջիգարը,
Արնի պես աճկս է լալի
Յանա-յանա,
Յանա-յանա:

Բըլբուլի նըման լացիլ իմ,
Աճկիրը արնով թացիլ իմ,
Յանա-յանա,
Էշխեմեդ հիվանդացիլ իմ,
Պառկած իմ դըժար հալի,
Յանա-յանա,
Յանա-յանա:

Էշխեմեդ դառիլ իմ յիզիդ,
Հալվեցա, մաշվեցա քիզիդ,
Յանա-յանա,
Ռահմ ա՛ր՛ա, մե խո՛սի միզիդ,

Բե՛մարվաթ, ձեն իմ տալի
Յանա-յանա,
Ցանա-յանա:

Էրվում իմ, կանչում իմ ամա՛ն.
Ծուցըդ բաղ, ունքիրըդ քաման.
Ցանա-յանա,
Աշխարիս մեչը քիզ նըման
Չիմ տեսած, ման իմ գալի
Յանա-յանա,
Յանա-յանա:

Մանուշակ բաց արած հովին,
Կարմի՛ր վարթ, ծաղիկ հուտովին,
Յանա-յանա,
Շատ մի՛ լացնի Սայաթ Նովին,
Աճկի՛ներս, կըսկըծալի,
Ցանա-յանա,
Յանա-յանա: